ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ հիվանդանոցային ծառայության ընդհանուր մանկական բաժանմունքի հերթապահ բուժքրոջ թափուր /թվով երեք հասքիտային/ աշխատատեղը զբաղեցնելու համար:Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության իրավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Հիվանդանոցային ծառայության ընդհանուր մանկական բաժանմունքի հերթապահ բուժքրոջ մրցույթով աշխատանքի անցնելու՝

1. պարտադիր պայմաններն են՝
   - ա. բուժքրոջ համար՝ միջին մասնագիտական կրթության առկայություն.
   - բ. բժշկական էթիկայի կանոնների իմացություն
2. լրացուցիչ պայմաններն են՝
   - ա. համակարգչով աշխատելու ունակություն
   - բ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
   - գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2015թ-ի <<ապրիլի>> <<02>> -ին <<Զարիշատ(Արամ)Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքում (ք.Արմավիր, Շահումյան 3) ժամը 12 ^{00} –ին

Դիմող ՀՀ քաղաքացիները <<Զարիշատ(Արամ)Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն >> ՓԲԸ –ի կադրերի բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- տվյալ աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկից քաղվածքի (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)պատճենները՝ բնօրինակների հետ միասին.
- Ինքնակենսագրություն
- Արական սեռի անձինք՝նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք:
- Մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի
- Անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9^{00}-ից մինչև 14^{00}-ն, բացի շաբաթ կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2015թ.-ի մարտի 23-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել << Զարիշատ(Արամ)Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ի կադրերի բաժին /ք.Արմավիր, Շահումյան 3, հեռ. 0237-2-08-92/:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: